

Տեսանեմք ի բաղանիսս, . . . զի ի ներքս
փորուածն զմբլթաբարգ է . . .

ὅπου γε ὀρώμεν τῶν τε λουτρῶν τοὺς λιθίνους
ὄροφους . . . ἃ κατὰ τὸν ἔνδον ὕψος εἰς ἡμικύ-
κλιον σχῆμα περικυμμένα . . . *

Այստեղ տեսնում ենք, որ թարգմանիչը
κοῖλος, τὸ κοῖλον, ἢ κοιλία. որ նշանակում
է դատարկ բորբաձեւ տարածութիւն, խո-
րութիւն — Hülung, Vertiefung «զմբլթ» բա-
ռով է արտայայտել: Սորա արտաքին ձե-
ւակերպութիւնն է αὐτῆς կորնթարթ,
կամար, աղեղ դրսի կողմից, թարգմանիչը
արտայայտել է «զմբլթաբարգ» բառով, փո-
խանակ «ի վերայ կորնթարթ գլխոյն երկ-
նից» թարգմանելու: Երբորդ վկայութեան
մէջ եւս ἡμικύκλιον, որ նշանակում է կի-
սարորակ, «զմբլթաբարգ» է թարգմա-
նել զարձեւել: Մեզ համար շատ կարեւոր է,
որ հայ թարգմանիչը ջրի պղպղակը, բաղա-
նիքի բորբաձեւ կամարը կամ երկնքի կորն-
թարթ բորբաձեւութիւնը նմանեցնում է
զմբլթի, որովհետեւ զմբլթի ներսի մասի
զազաթը, իրօք երկնածեւ է, այսինքն բոլո-
րակ, ուստի եւ հնագոյն ժամանակներից յա-
ճախ նկարագորդուած աստղերով, Տիրոջ ա-
թոսի եւ երկնային գորութեանց եւ սուրբերի
հետ:

Խնդիրը աւելի է պարզուում, եթէ զրմ-
բլթ կամ զմբլթեայ բառի գործածութիւնը
տեսնենք Ս. Գրքի հայերէն թարգմանութեան
մէջ: Անգեայ Ա. 4. «Եթէ ձեզ միայն իցէ բնա-
կել ի տունն զմբլթեայս, եւ տունդ իմ աւեր
կայ»: Դորա փոխարէն Եօթանասնից յու-
նարէն թարգմանութիւնն ունի .

Εἰ καιρὸς μὲν ἐμὶν ἔστιν τοῦ οἰκεῖν ἐν οἴκοις
ὑμῶν κοιλοστάθμοις, ὁ δὲ οἶκος ὑμῶν ἔξῃ ῥήμο-
ται.

Հայերէնի «ի տունն զմբլթեայս»-ի փոխա-
րէն յոյնն ունի ἐν οἴκος κοιλοστάθμου, որ նշա-
նակում է «փայտածածկ ձեղումով տների
մէջ»: Երբայեցերէն բնագրի մէջ եւս նոյն
իմաստն ունի .

**העת קצם אהם קצת כבתיכם סופונים
והבית הזה קרב:**

* Ὀμιλία Γ. p. 98.

«Երբառե-

կէմ սիփունիմ». «Սիփուն» յատկապէս նշա-
նակում է տաճարի ներքին ծածկոյթը, ձե-
ղունը ըստ Kautsch-ի բառարանի: Հայը այս-
տեղ թարգմանել է ոչ բառացի. նորա հաս-
կացողութեամբ փառաւոր տները զմբլթեայ
են. զմբլթեայ կամ զմբլթաւոր պիտի լինէր
եւ տաճարը, մինչդեռ դորա հակառակ աւե-
րակ է: Նոյնիմաստ բառը Գ. Թագաւորութեան
Ձ. 15, 16 ԵՀՈՍՏԱԹՄՈՍ թարգմանուած է
բառացի եւ ճիշդ, «եւ պատեաց շուրջանա-
կի»: Բայց այստեղ եւս բորբաձեւութեան
զազաթարը գուրս չէ այս արտայայտութիւ-
նից:

Լուսաւորչի տեսիլքի մէջ մեր ասած
նկարում է մի ճարտարապետական շէնք շորս
սիւների վերայ հաստատուած զմբլթով. «եւ
ի շորեցունց սեանցն ի վերայ խաչիցն կա-
մարք զարմանատեսք ի միմեանս կապեցան
եւ ի վերայ այնորիկ տեսի զմբլթածեւ խո-
րանարդ ամպեղէն շինուած աստուածակերտ
զարմանալի»: * Ուշադրութիւն պէտք է
զարձնել յատուկ «զմբլթածեւ խորանարդ»
արտայայտութեան վերայ, որ զմբլթի հին
ձեւն է մատնանշում, հէնց մօտաւորապէս
մեր Տիկորի: Այս տեսիլքը, հնագոյնը մեղա-
նում իւր տեսակի գրականութեան մէջ, կար-
ծում ենք ոչ ուշ, քան է. դար, երբ գրում
էին խաչի եւ եկեղեցու հետ կապուած շարա-
կանները, որոնց մէջ նաեւ «Էջմիածինն ի
Հօրէ»-ն, որի հեղինակը (համարում է Սա-
հակ Չորափորեցին) շատ լաւ ծանօթ է տե-
սիլքի բովանդակութեան: Բայց նա աւելի է հին
է, յամենայն դէպս ի նկատի ունի Էջմիածնի
տաճարի շէնքը, որ անհրաժեշտ չէ կոմիտա-
սի նորոգութեան հետ կապել:

Աւելացնենք, որ զմբլթ բառը, թէեւ
ընդհանրացած մեր Ե. դարի դասական լե-
զուի մէջ, ծագմամբ հայերէն չէ. Hubsch-
man իւր Հայերէն Քերականութեան մէջ**
«զմբլթ» բառը նոյնացնում է նոր պարս-
կերէնի gunbad բառի հետ, մինչդեռ
Nöldecke-ն ասորական «գուրտայ» բառից է

* Ագաբ-սագեղոս. Ղուկասեանի Հրտ. էր .
374:

** Armenische Grammatik. Strasburg. 1895
եր . 127: